Սերգեյ Դովլաթով

Կոմպրոմիսներ

Կոմպրոմիս տասներկուերորդ

(«Սովետսկայա էստոնիա»: Հոկտեմբեր: 1976 թ .)

«ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԵՂ ԶԵՆՔ Է: Հունական դիցաբանության մեջ կա Լետա կոչվող մոռացության գետը, որի ջրերը տանում էին մարդկանց կրած երկրային տանջանքները: Լետայի ափին մարդը ստանում էր երջանկության խղճուկ, ժամանակավոր պատրանք: Նրա միամիտ բանականությունը՝ փորձառությունից ու հիշողություններից զուրկ, մարդուն խաղալիք էր դարձնում ճակատագրի ձեռքին: Ի սկզբանե, սակայն, Լետայի հոսանքին հակառակ հոսում է մարդկային հիշողության ջրառատ ու անսպառ գետը…

Տարտու քաղաքում բացվեց ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին բանտարկյալների 3-րդ հանրապետական հավաքը:

Նրանց դեմքերը միաժամանակ տոնական ու խիստ են: Յուրաքանչյուրի բաճկոնին փոքրիկ կրծքանշան կա՝ կարմիր եռանկյունի եւ աղավնու ուրվագիծ՝ թափված արյան ու խաղաղության անխախտ խորհրդանիշները: Նրանք խումբ-խումբ զրուցում են «Վանեմույնե» թատրոնի ընդարձակ նախասրահներում: Ողջույններ, ողջագուրումներ, հուզումնալի խոսքեր…

Պատմում է ինժեներ-կոնստրուկտոր Լազար Սլապակը .

Սկզբում ռազմագերիների ճամբարում էի: Հակաֆաշիստական պրոպագանդայի եւ փախուստների կազմակերպման համար փոխադրեցին Շտուդհոֆ… Յուրայիններին ճանաչում էինք աչքերից . ձեռքի մեկ շարժումից, անորսալի ժպիտից… Մարդն իրեն զոհ չի զգում, եթե կողքին ընկերներ ունի, եղբայրներ…

Հավաքը տեւեց երկու օր: Հիշողությունների, ճշմարիտ ընկերության, կրած տառապանքին հավատարմության երկու օր: Պատվիրակներն ու հյուրերը մեկնեցին՝ համալրելով մարդկային հիշողության թանկագին ու հավերժ արխիվը: Իսկ մենք նրանց հետեւելով կրկնում ենք խիստ ու հանդիսավոր՝ որպես նախազգուշացում, որպեա խաղաղության երդում ու պատվիրան . «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»:

Տարտու հասանք վաղ առավոտյան: Ժբանկովը ամբողջ ճանապարհին վերանորոգում էր լուսանկարչական ապարատը: Չունեցած գործիքները փոխարինեց գրասենյակային ամրակներով, մեկուսիչ ժապավենով, կոտրված հայելու բեկորով…

Սկզբում ուզում էին ուղարկել Սալկիելին, սակայն Ժբանկովը ընդվզեց .

Ես, ի միջիայլոց, ռազմաճակատային եմ, խիղճ ունեցեք: Խմբագիր Տուրոնոկը փորձեց պնդել .

Այնտեղ բանտարկյալներն են հավաքվում, ոչ թե ռազմաճակատայինները:

Կարո՞ղ է ես բանտարկյալ չեմ, ձայնը բարձրացրեց Ժբանկովը:

Սթափարանը չենք հաշվում, թունոտ քմծիծաղեց խմբագիրը:

Ժբանկովը չնահանջեց: Ռեզերվում նա միշտ ուներ մի գործուն միջոց: Երբ Միշային բացահայտորեն նեղում էին, նա ակնարկում էր, թե կսկսի խմել: Ուղղակիորեն չէր ասում: Հարցնում էր միայն .

Իսկ փոխօգնության դրամարկղը դեռ բա՞ց է:

Դա նշանակում էր, որ Միշան որոշել է փող ճարել: Իսկ եթե չստացվի՝ վաճառել ու խմել արտասահմանյան խոշորացուցիչը:

Նրան, որպես կանոն, զիջում էին: Այդուհանդերձ նա հաճախ էր խմում: Իսկ խմելու մասին միտքն արդեն դրա նախանշանն էր…

Հենրիխ Ֆրանցեւիչ, միջամտեցի ես, Ժբանկովի հետ գործուղման եղել ենք:

Մեր միջեւ ստեղծագործական լիակատար փոխըմբռնում կա:

Դա էլ ինձ վախեցնում է, ասաց Տուրոնոկը: Դե լավ, գնացեք:

Իմ կարծիքով, խմբագիրը պարզապես հիշեց, որ միջոցառումը պատասխանատու էր: Իսկ Ժբանկովը հիանալի լուսանկարիչ էր:

Կայարանից թատրոն ոտքով գնացինք: Տարտուն բարեհամբույր, հաճելի քաղաք է: Անցորդներից շատերը ուսանողական կանաչ գլխարկներով էին: Թափանցիկ անձրեւ էր մաղում:

Ժապավեն պիտի առնեմ, ասաց Ժբանկովը:

Մտանք գրենական պիտույքների մի փոքրիկ խանութ: Վաճառողը էլեկտրական սալիկի վրա սուրճ էր պատրաստում: Նրա զուտ էստոնական, գործված ժիլետի մետաղե կոճակները փայլում էին:

Միկրատ-չորս կա՞, հարցրեց Ժբանկովը: Վաճառողը պատասխանեց գլխի բացասական շարժումով: Ես հետաքրքրվեցի .

Իսկ որտե՞ղ է մոտակա խանութը, ուր կա այդ միկրատ-չորսը:

Հելսինկիում, միանգամայն լուրջ պատասխանեց վաճառողը:

Ոչինչ, ասաց Ժբանկովը, «ԷԴԱՋԻ»–ի տղերքը այնտեղ են լինելու…

Անձրեւը սաստկանում էր: Շտապեցինք թատրոն: Մուտքի դիմաց մարդիկ էին խմբված՝ անձրեւանոցներով եւ ցելոֆանե գլխաձածկերով:

Էս ինչի՞ են վայրենիների պես բոլորը անձրեւանոցներով, զարմացած ասաց խորը ջրափոսում կանգնած Ժբանկովը:

Մի գոռա, ասում եմ:

«Վանեմույնե» թատրոնը համեմատաբար վերջերս է կառուցվել: Մարմարե աստիճաններ, ընդարձակ նախասրահներ, խուլ արձագանք: Մուտքի վրա՝ կապույտ ցուցապաստառ (Էստոնիայում սիրում են կապույտ ցուցապաստառներ) .

«Փա՛ռք ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին բանտարկյալներին»:

Գտանք ադմինիստրատորին, ներկայացանք:

Ծրագիրն այսպիսին է, ասաց: Սկզբում՝ հուզիչ հանդիպումներ: Հին ընկերների հանդիպումներ: Հետո՝ հանդիսավոր ժողով: Եվ վերջապես՝ բանկետ: Դուք, ի դեպ, նույնպես հրավիրված եք:

Բնականաբար, ասաց Ժբանկովը: Նախասրահում ճեմում էին շքանշաններով ու մեդալներով մարդիկ: Հիմնականում՝ ոչ մեծ խմբերով: Ծխում ու կիսաձայն զրուցում Էին:

Հուզականությունը, կարծես, բացակայում է, ասաց Ժբանկովը:

Ադմինիստրատորը պարզաբանեց .

Բանտարկյալները հավաքվում են ամեն տարի: Քսան տարի անընդմեջ: Հուզական մասը շուտով կվերջանա: Հանդիսավոր ժողովը կտեւի մոտ մեկ ժամ: Նույնիսկ ավելի քիչ: Հետո՝ բանկետ…

Դրանից բխող բոլոր հետեւանքներով, անսպասելիորեն հռհռաց Ժբանկովը:

Ադմինիստրատորը այլայլվեց:

Կներեք, ասում եմ, ես պետք է մարդկանց հետ զրուցեմ: Որոշ գրառումներ անեմ:

Նա մոտ կանչեց բարձրահասակ, ամրակազմ մի տղամարդու .

Ծանոթացեք: Լազար Բորիսովիչ Սլապակ, ինժեներ–կոնստրուկտոր: Շտուդհոֆի նախկին բանտարկյալ:

Ես էլ ներկայացա:

Ինձ Շտուդհոֆ էին տեղափոխել հակաֆաշիստական գործունեության ու փախուստների կազմակերպման համար: Իսկ մինչ այդ Լեհաստանում էի…

Սլապակը խոսում էր վարժ ու վստահ: Երեւում էր, որ լրագրողների հետ շփվելու փորձ ունի: Ձեզ, հավանաբար, հետաքրքրում են ուշագրավ փաստե՞րը, հարցրեց:

Գլխով արեցի:

Նստենք:

Նստեցինք բազմոցին: Մեզ միացան եւս երկու հոգի: Համեմատաբար երիտասարդ մեկը՝ գինվորական բաճկոնով եւ թեւը կտրած մի մոայլ ծերունի: Ադմինիստրատորը ներկայացրեց նրանց՝ Վալտոն եւ Գուրչենկո:

Երբ բոլորը լռեցին, Սլապակը շարունակեց .

Փախուստներ կազմակերպելու համար միջոցներ էին հարկավոր: Սկսեցինք մտածել, թե որտեղից ճարենք: Եվ, պատկերացրեք, ելքը գտանք: Ես շախմատ վատ չեմ խաղում: Իսկ ճամբարի պետը շախմատի սիրահար էր: Որոշեցինք մրցաշար անցկացնել: Մրցանակը՝ ութսուն մարկ: Ես հաղթեցի տասը պարտիայից յոթը: Ճամբարի պետը ասաց . «Դոններ-վետտեր» եւ փողը տվեց…

Հետաքրքիր է, ասաց թեւատ ծերունին, շատ հետաքրքիր է . . .

Նոթատետրումս գրեցի նրա ազգանունը՝ Գուրչենկո:

Մինչ այդ ծերունին լուռ էր:

Ի՞նչ է պատահել, ընկեր, ասաց Սլապակը:

Ասում եմ՝ վատ չէիք ապրում…

Այսի՞նքն, լարված ժպիտով հարցրեց ինժեներ-կոնստրուկտորը:

Մորդովիան քեզ չէր խանգարի մի երեք տարով, շարունակեց ծերունին:

Զգացվում էր, որ խմել է:

Որտե՞ղ եք նստել, ընկեր, միջամտեց ադմինիստրատորը: Դախաո՞ւ, Օվսենցի՞մ:

Մորդովիայում եմ նստել, պատասխանեց Գուրչենկոն, Ղազախստանում… Քսան տարի ձգել եմ որպես նախկին ռազմագերի…

Կարծում եք, ե՞ս չեմ նստել, բարկացավ ինժեներ-կոնստրուկտորը: Երիկամներիցս բան չի մնացել: Իոսսերի մասին լսե՞լ եք: Վեսլյանա՞: Ռոպչա՞:

Լսեք ենք, խոսակցության մեջ մտավ զինվորական բաճկոնով երիտասարդը: Ռոպչայի առաքաբանտում մենինգիտ ստացա… Լակոտ էի, երբ գերի ընկա: Ճամբար ուղարկեցին: Թեեւ զորակոչի ենթակա չէի: Պրոպագանդայով էլ չէի զբաղվում: Շատ անարդար էր: Համակենտրոնացման ճամբարում շատ վատ էր: Ֆաշիստները սովամահ էին անում մեզ: Հետո ճամբարում կին չկար…

Բա Ռոպչա ո՞նց ընկար, չարախնդությամբ հարցրեց թեւատը:

Շատ հասարակ: Մեզ ֆրանսիացիները ազատեցին: Հայտնվեցի Փարիզում: Վազեցի սովետական դեսպանատուն: Մոտ ութ հարյուր հոգի հավաքվեցինք: Գնացք նստեցրին: Ու տարան դեպի Արեւելք… Տարան, տարան… Մոսկվան անցանք: Ուրալն անցանք…

Ժպտացեք, տղերք, խնդրեց Ժբանկովը: Ուշադրություն: Նկարում եմ:

Ժապավեն, ախր, ասում եմ, չունես:

Դա չէ կարեւորը, ասաց Ժբանկովը, իրավիճակը լիցքաթափել է պետք:

Ադմինիստրատորը նույնպես անհանգստացավ: Տեղից ելավ ու ափերն իրար զարկեց .

Ընկեր բանտարկյալներ, դահլիճ անցեք, խնդրեմ… Հանդիսավոր մասը հազիվ քսան րոպե տեւեց: Ամենաերկարը հենց ադմինիստրատորը խոսեց: Վերջացրեց այսպես .

Մենք ընդմիշտ կմնանք որպես ֆաշիզմի գերիներ: Չէ՞ որ մեր ապրածը երբեք չենք կարող մոռանալ…

Նա է՞լ է ռազմագերի եղել, հարցրի թեւատ Գուրչենկոյին:

Այդ տխմարը թատրոնից է, պատասխանեց ծերունին, կուսկոմի հանձնարարությունն է կատարում: Չորրորդ տարին է ելույթներ է ունենում… Մորդովիան նրան չէր խանգարի՝ մի երեք տարով… Ծառ կտրելու…

Այդ պահին բացվեցին բանկետի սրահի դռները: Նստեցինք լուսամուտի մոտ: Ժբանկովը լցրեց օղին:

Եկեք առանց կենացների, առաջարկեց Սլապակը, լավ լինենք:

Խմեցինք լռության մեջ: Ժբանկովը անմիջապես նորից լցրեց: Վալտոնը փորձում էր ավարտել իր պատմությունը:

Կրտսեր նավաստի էի առեւտրական նավատորմում: Գերմանացիք սխալվել էին: Ինձ չպետք է բանտարկեին: Ես ռազմական նավատորմից չէի: Ես առեւտրական նավաստի էի: Բռնեցին ու բանտարկեցին: Ըստ էության, անմեղ տեղը…

Տպավորությունն այնպիսին էր, թե Վալտոնն արդարանում է: Ավելին՝ փորձում է ապացուցել իր լոյալությունը գերմանացիների հանդեպ:

Չուխոնցիք բոլորն այդպես են, ասաց Ժբանկովը: Ադոլֆը նրանց լավագույն բարեկամն է, իսկ ռուսներին արհամարհում են:

Մեզ ինչի՞ պիտի սիրեն, ասաց Գուրչենկոն: Որ իրենց Էստոնիան բարդակի՞ ենք վերածել:

Բարդակը դեռ ոչինչ, ասաց Ժբանկովը: Արաղն են թանկացնում:

Նրա դեմքն արդեն փայլում էր: Շիշը ձեռքից բաց չէր թողնում:

Տապակած միս դնե՞մ ձեզ, ինձ դիմեց Սլապակը: Ժբանկովը զգուշությամբ դիպավ նրա արմունկին .

Վաղուց էի ուզում հարցնել… Ինչպես ասում են, անհամեստ մի հարց… Դուք, հազար ներողություն, ազգությամբ ո՞վ եք:

Ալապակը նկատելիորեն զգոնացավ: Հետո հատու ու վստահ պատասխանեց: Խոսեց թաքցնելու ոչինչ չունեցող մաս դու տոնով .

Ես ազգությամբ հրեա եմ: Իսկ դուք, հազար ներողության ազգությամբ ո՞վ եք:

Ես ազգությամբ ռուս… հրեաներից եմ, խաղաղարար ձեւակերպում գտավ Ժբանկովը:

Այստեղ Սլապակին դիմեց թեւատ Գուրչենկոն:

Ոչինչ, ինչ կա որ, ասաց նա, թող որ հրեա ես, սարսափելի ոչինչ չկա: Ես չորս տարի Ղազախստանում եմ ապրել: Ղազախները հազար անգամ հրեաներից վատն են…

Էլի խմեցինք: Ժբանկովը աշխույժ զրույց էր վարում Գուրչենկոյի հետ: Նրա խոսքը ավելի ու ավելի արտահայտիչ էր դառնում:

Սրահն աստիճանաբար լցվեց բնորոշ աղմուկով: Զնգում էին բաժակներն ու դանակ-պատառաքաղները: Միացրին ռադիոընդունիչը: Հնչեցին հզոր ակորդներ .

… Պատերազմ է ժողովրդական, Սրբազան պատերազմ…

Հեյ, ո՞վ է մոտ կանգնած: Դրա ձայնը կտրեք, ասաց Ժբանկովը:

Թող մնա, ասում եմ, քո հայհոյանքը գոնե չի լսվի:

Ճշմարտությունը միշտ պիտի լսվի, անսպասելիորեն գոռաց Գուրչենկոն…

Ժբանկովը ելավ ու քայլեց դեպի ռադիոընդունիչը: Նկատեցի, որ դահլիճ են մտել պիոներներ: Նրանք շփոթված շրջանցում էին սեղանները: Երեւի անձրեւի պատճառով էին ուշացել: Բերել էին հսկայական ծաղկեփունջ:

Միշան հայտնվեց նրանց դիմաց: Նրա տեսքը տպավորիչ էր: Աչքերը փայլում էին ոգեւորությունից: Փողկապը ուսին էր:

Համակենտրոնացման ճամբարների նախկին գերիների մեջ Ժբանկովն աչքի էր ընկնում դեմքի տանջահարությամբ ու ողբերգականությամբ:

Պիոներները կանգ առան: Շփոթված Ժբանկովը՝ նույնպես: Կարմիր փողկապով նիհարակազմ տղան բարձրացրեց ձեռքը: Ինչ-որ մեկը անջատեց ռադիոընդունիչը:

Տիրած լռության մեջ լսվեց մանկական դողդոջուն ձայնը .

Հավերժ փա՛ռք հերոսներին: Հետո երեք անգամ .

Փա՛ռք, փա՛ռք, փա՛ռք:

Վախեցած Ժբանկովը կրծքին սեղմեց ծաղկեփունջը:

Քիչ անց բացականչեց .

Ուռա՜:

Աներեւակայելի աղմուկ էր: Մեկը արկղերից հանում էր ռեկվիզիտը: Մյուսն արդեն լեզգինկա էր պարում՝ ստվարաթղթե յաթաղանն ատամներով բռնած…

Տեղական թերթի տղաները լուսանկարում էին Ժբանկովին:

Նրա կարմրատակած դեմքը շրջապատված էր ծաղիկներով: Վերադարձավ: Ծաղկեփունջը տեղավորեց լուսամուտի գոգին:

Գուրչենկոն բարձրացրեց գլուխը: Քիչ անց այն կրկին կարտոֆիլի ափսեի վրա էր:

Աթոռը պահեցի, որ Ժբանկովը նստի:

Շքեղ ծաղկեփունջ է, ասում եմ:

Սա ծաղկեփունջ չէ, մռայլ ասաց Ժբանկովը: Ծաղկեպսակ է…

Այս ողբերգական բառի վրա էլ հրաժեշտ եմ տալիս ժուռնալիստիկային: Բավակա՛ն է:

Եղբայրս, որ երկու դատվածություն ունի (մեկը՝ չկանխամտածված սպանության համար), հաճախ ասում է .

Որեւէ օգտակար գործով զբաղվիր: